ՀԱՅԱՍՏԱՆԻ ԼԵԶՎԱՎԻՃԱԿԸ. ՆԵՐԿԱՆ ԵՎ ՀԵՌԱՆԿԱՐՆԵՐԸ

Զաքարյան Հ. («Տաթեւ» գիտակրթական համալիր, ՀՊՄՀ, Հայաստան)
hovzakaryan@yahoo.com

Բանալի բառեր՝ լեզվավիճակ, հայոց լեզու, լեզվաքաղաքականություն, կրթության լեզու, էլեկտրոնային հայալեզու բովանդակություն:

Հայ պատմամշակութային ժառանգության առանցքային բաղադրիչը և հիմնական հենասյունը հայոց լեզուն է, որ ձևավորվել և ներկայիս իր զարգացմանն է հասել նախ և առաջ Հայկական լեռնաշխարհում:

Հայոց լեզվի հարատևության երաշխիքը նրա անխափան կիրառության ու զարգացման որոշակի պայմանների ապահովումն է: Այդ պայմանների ամբողջությունը սովորաբար բնութագրվում է որպես լեզվավիճակ, որը ամրագրվում ու պահպանվում է լեզվական օրենսդրությամբ, կառավարվում լեզվաքաղաքականությամբ և կարգավորվում լեզվաշինությամբ:

Հայաստանի (ՀՀ-ի, ԼՂՀ-ի, պատմական Հայաստանի այլ տարածքների) և հայոց սփյուռքի լեզվավիճակի ուսումնասիրությունը, նկարագրությունը, նրա ամբողջական պատկերի ստեղծումը, նրա հեռանկարների կանխատեսումը և դիմակայելիք վտանգների վերլուծությունը կարևոր են հայ ժողովրդի և նրա մշակույթի պահպանման ու զարգարցման գերակայությունների ճշտման, արդի մարտահրավերներին համապատասխան գիտականորեն հիմնավորված մոտեցումների և գործողությունների միասնական ծրագրի մշակման, ռազմավարական ծրագրերի նախապատրաստման առումներով:

Սույն զեկուցման մեջ Հայաստանի ներկայիս լեզվավիճակի ուրվագծման շրջանակներում մասնավորապես քննարկվում են հետևյալ հիմնախնդիրները.

1. Հայաստանի լեզվավիճակի և ժողովրդագրական իրավիճակի փոխկապվածությունը, հատկապես այն հանգամանքը, որ ազգային փոքրամասնությունները և համապատասխան լեզվական փոքրամասնությունները մասամբ են միմյանց համընկնում, և կա այդ անհամապատասխանությունը, մեղմացման անհրաժեշտությունը:

2. Լեզվավիճակի հարաբերակցությունը միջազգային քաղաքական իրավիճակի, լեզվամշակութային համամոլորակային պատերազմի արդի փուլի հետ և հայերենի մրցունակության բարձրացման ու պետական պաշտպանվածության ուժեղացման անհրաժեշտությունը:

3. Հայաստանում կրթության լեզվի ընտրության իրավական ու փաստացի դրվածքը և դրա անդրադարձը լեզվավիճակի վրա, հայալեզու կրթության այլընտրանքների սահմանափակման անհրաժեշտությունը:

4. Տեղեկույթի մշակման ու փոխանակման էլեկտրոնային միջավայրում և հատկապես համացանցում հայալեզու բովանդակության (առաջին հերթին գրադարանների, ձայնադարանների, պատկերադարանների, հանրագիտարանների, բառարանների, հեռուսուցող համակարգերի, որոնող, սրբագրող, թարգմանող, ընթերցող գործիքների) առաջանցիկ զարգացման անհրաժեշտությունը՝ օրենսդրական ու վարչական լծակներով ներգրավելով գիտական, կրթական, մշակութային, տնտեսական և այլ բնույթի կազմակերպությունների ու անհատների:

5. Արտաքին գովազդում անգլերենի գերակայությունը՝ ապրանքային նշանի պաշտպանվածության պատրվակով և դրա կանխարգելման անհրաժեշտությունը:

6. Լեզվական օրենսդրության զարգացման, խորացման ու արմատականացման անհրաժեշտությունը՝ ազգային շահերի գերակայության նկատառումով:

LANGUAGE SITUATION IN ARMENIA: PRESENT STATE AND PERSPECTIVES

Zakaryan H. ("Tatev" Educational Complex, Armenian State Pedagogical University after Kh. Abovyan, Armenia)